89-я Армянская Таманская стрелковая дивизия в последней фазе Великой Отечественной войны, изд-во «Гитутюн» НАН РА. Ереван, 1994, 348 с.

89-րդ Հայկական Թամանյան հրաձգային դիվիզիան Հայրենական մեծ պատերազմի վերջին փուլում, ՀՀԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 1994 թ., 348 էջ։

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 50-ամյակի առթիվ, ՀՀԱ պատմության ինստիտուտը լույս է ընծայել պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Դ. Ս. Արրահամյանի «89-րդ Հայկական Թամանյան դիվիզիան Հայրենական մեծ պատերազմի վերջին փուլում» աշխատությունը։ Այն նվիրված է 89-րդ դիվիզիայի մարտական գործունեության վերջին շրջանի, հատկապես 1945 թ. հունվար-փետրվար ամիսներին Վիսլա-Օդերյան և ապրիլ-մայիս ամիսներին Բեռլինյան ճակատամարտերին մասնակցելու և դրանց նախապատրաստելու հերոսական դրվագներին։ Իր կառուցվածքով ու բովանդակությամբ, հարցերի բազմապլանային և խոր ու համակողմանի քննարկմամբ զբաղեցնող աշխատությունը որակապես տարբերվում է 89-րդ դիվիզիայի մասին լույս տեսած աշխատություններից։

Աշխատությունը սկսվում է 89-րդ հրաձգային դիվիզիան 1944 թ. աշնանը Ղրիմից Լեհաստան փոխադրելու, խորհրդա-լեհական սահմանի վրա տեղաբաշխվելու և նոր պայմաններին համապատասխան կատարված մարտական, նախապատրաստական աշխատանքների նկարագրումով։ Այնտեղ հեղինակը ցույց տալով զինվորների ուսուցման, ռազմաքաղաքական պատրաստվածության մակարդակի բարձրացման, հայրենասիրության, նվիրվածության, բարդ իրավիճակներում արագ կողմնորոշվելու ուղղությամբ կատարվող աշխատանքներ, ընդգծում է դրանց անհրաժեշտությունը ռազմական գործողությունների ծավալման ժամանակ։ Հետաքրքիր դեպքեր ու փաստեր են վկայակոչվում, թե ինչպես էր դիվիզիան մերձենում մյուս զինվորական միավորումների հետ և համատեղ նախապատրաստվում վճռական գործողությունների։

Հաջորդ գլխում հեղինակը ռազմագետի հմտությամբ էջ առ էջ բացում է Վիսլա-Օդերյան մարտերին 89-րդ հրաձգային դիվիզիայի մասնակցության օրագրությունը, ցույց տալիս այն հերոսական պայքարը, որին մեծ նվիրումով մասնակցում էին զինվորից մինչև զեներալը։ Թվարկելով դիվիզիայի աղատագրած բնակավայրերն ու ռազմական կարևոր նշանակություն ունեցող հանգույցները, կայմելով համապատասխան սխեմաներ, նա ընդգծում է այն կարևոր դերը, որ խաղացին հայկական դիվիզիայի զորամասերն բնդհանուր հաշողությունների մեջ։ Այստեղ հանդամանորեն վերլուծվում են 89-րդ դիվիզիայի զորամասերի ծրագրված, ինչպես նաև չնախատեսված մարտական գործողությունները, արվում համապատասխան եզրակացություններ։

Հաջորդ գլուխները նվիրված են Բեռլինի գրավման համար մղվող մարտերին 89-րդ հրաձգային դիվիզիայի նախապատրաստման ու մասնակցության պատմության մանրակրկիտ լուսաբանմանը։ 1945 թ. փետրվարի կեսերից մինչև ապրիլի կեսերը, դիվիզիան ակտիվորեն պատրաստվում էր բեռլինյան մարտերին, ճշտելով իր տեղն ու դերը և մյուս զորամիավորումների հետ համագործակցելու ծրագրերը։ Այդ լարված օրերին նույնպես մեծ աշխատանք էր կատարվում զինվորների մարտական ոգին և ռազմական պատրաստվածությունը բարձրացնելու ուղղությամբ։ Ապա հեղինակն ուրվագծում է ապրիլ-մայիսին Ֆրանկֆուրտից մինչև Բեռլին 89-րդ հրաձգային դիվիզիայի մարտական ուղին, թվարկելով ոչ միայն աղատագրված քաղաքներն ու բնակավայրերը, այլև մեկ առ մեկ նշելով Բեռլինի այն շրջանները, մետրոյի և երկաթգծի կայարանները, փողոցներն ու խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները, որոնք աղատագրվել են դիվիզիայի կողմից։

Աշխատությունը եզրափակվում է հաղթանակից հետո Գերմանիայում դիվիզիայի մի քանի ամիսների գործողությունների և նոր պայմաններում կատարած աշխատանքների վերլուծությամբ։

Գրախոսվող աշխատությունն ընդգրկումով ու շարադրանքով պատմառազմագիտական բնույթ ունի, որով տարբերվում է պատերազմի մասին եղած մյուս աշխատություններից։ Հեղինակը քայլ առ քայլ հետևելով պատերազմի վերջին շրջանում 89-րդ հրաձգային դիվիզիայի մարտական գործողություններին, անդրադարձել է հակառակորդի դեմ մղած բոլոր հիմնական մարտերին ու «պատահական» ընդհարումներին, գնահատել յուրաքանչյուրի նշանակությունն ու տեղն ընդհանուր պայքարի շղթայում։ Հեղինակը չի բավարարվել արխիվային փաստերի չոր տարեգրությամբ։ Տարբեր լաժիններում ներկայացված են հետաքրքիր պատկերներ գինվորների ու զորամասերի սխրագործություններից, գինվորական կյանքը բնութագրող ռազմական դրվագներ, խաղաղ բնակիչների վկայություններ, ռազմագերիների խոստովանություններ և այլն։ Դա հարստացնում, ավելի ամբողջական է դարձնում ուսումնասիրությունը։

Աշխատության մեջ քննադատաբար օգտագործված են արխիվային հարուստ նյութերը, ժամանակի մամուլը և պատմական ու ռազմագիտական գրականություն։ Գ. Արբրահամյանը փաստաթղթերի խոր և բազմակողմանի վերլուծությամբ կարողացել է նորովի գնահատել դրանք և որոշակի եզրահանգումներ անել յուրաքանչյուր կոնկրետ դեպքի քննարկումից։ Կուռ և ամբողջական, վերլուծական շարադրանքն ընթերցողին համոզում է հեղինակի պատմառազմագիտական խոր գիտելիքների մասին։ Եվ դա պատահական չէ։ Հեղինակն իր ուսումնասիրած դեպքերի ականատեսն ու ակտիվ մասնակիցն է։ Նա մեծ ոգևորությամբ է նկարագրում առանձին մարտիկների և միավորումների հերոսական սխրանքները և միաժամանակ խոր ցավով է խոսում ամեն մի զոհված կամ «անհայտ կորած» գինվորի մասին։ Ի դեպ, հեղինակը գինվորի անմիջականությամբ ու կրքոտությամբ մերժում է «անհայտ կորած» հասկացողությունը և բանավիճելով տարբեր հեղինակների հետ, բազմաթիվ փաստեր է վկայակոչում՝ ցույց տալով, որ դրանք հիմնականում իրենց մարտական պարտականությունների կատարման ժամանակ զոհված գինվորներ են, որոնց մասին, դժբախտաբար, ժամանակին լուր չի ստացվել։ Նա գայրույթով է խոսում նաև նախկին ռազմագերիների նկատմամբ անմարդկային վերաբերմունքի մասին։ Դրանց հիմնական մասը բարձր է պահել գինվորի պատիվն ու գերության մեջ է հայտնվել անկախ իր կամքից։ Նրանց նկատմամբ հալածանքը, որը շարունակվեց նաև հետպատերազմյան շրջանում, հեղինակը դիտում է որպես ծանր հանցանք։ Նա արդարացիորեն գտնում է, որ բոլոր գինվորները, որոնք եղել են զորքող բանակում, այդ թվում և անհայտ կորածները և ռազմագերիները, պետք է կոչվեն Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ և օգտվեն հավասար իրավունքներից։

Աշխատության վերջում բերելով Վիսլա-Օդերյան և Բեռլինյան ճակատամարտերում 89-րդ դիվիզիայից զոհված սպաների և գինվորների ցուցակները՝ հեղինակը գինվորի իր պարտքն է կատարում՝ արժանին հատուցելով իր գինակից ընկերներին։

Աշխատության յուրաքանչյուր գլխում, լայն կտավի վրա լուսաբանվում են ռազմաճակատի ընդհանուր և կոնկրետ իրավիճակները, ցույց է տրվում մարտական 89-ի տեղն ու դերը։ Հեղինակը խուսափում է ընդհանուր դիտողություններից և յուրաքանչյուր դեպք քննում է կոնկրետ պայմաններում, քննադատաբար վերլուծելով ամեն մի դրվագ։

Աշխատությունն ավելի մատչելի ու տպավորիչ դարձնելու նպատակով հեղինակը կազմել է պատերազմի վերջին փուլում 89-րդ հրաձգային դիվիզիայի մղած հիմնական մարտերի 19 սխեմաներ, որոնց օգնությամբ ցույց է տալիս տարբեր ստորաբաժինների տեղաշարժումը, շարժման հիմնական ուղղությունները, փոխկապակցված գործողությունները, ազատագրված բնակավայրերն ու տակտիկական կենտրոնները։ Այդ սխեմաները նպաստում են հստակ պատկերացում կազմելու դիվիզիայի հիմնական մարտական ուղղությունների և դրվագների մասին։ Հեղինակը կազմել է նաև 22 աղյուսակներ, որոնք հարուստ տվյալներ են պարունակում դիվիզիայի ազգային կազմի, զենքի տեսակների, մատակարարման, անձի ընկած գինվորների քանակի և զոհերի մասին։ Հեղինակը որոշակի ճշտումներ է կատարում մինչ այդ հրապարակված աշխատությունների տվյալների մեջ։

Հպարտությամբ են ընթերցվում աշխատության այն բազում էջերը, որտեղ ցույց է տրվում հայազգի գինվորի կամ սպայի պատասխանատվության բարձր զգացումը բարդ ու հաճախ վտանգավոր հանձնարարությունների կատարման, մյուս զորամիավորումների հետ փոխհարաբերությունների ժամանակ։ Հայ ժողովրդի զավակները, գինվորից մինչև զեներալ, Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում հերոսաբար կռվել են ֆաշիզմի ջախջախման համար, միշտ աչքի առջև նկատի ունենալով նաև այն, որ դաշնակից Թուրքիան չհամարձակվի ու չփորձի կենսագործել հայ ժողովրդին ոչնչացնելու իր հրեշավոր պլանները։ Հեղինակը գիտակցաբար խուսափել է իր հայրենակիցների մասին գովեստի խոսքեր ասելուց։ Նա այդ բոլորն

անում է վկայակոչելով բանակի ոչ հայազգի գործիչների, նշանավոր զորավարների և հրամանատարների մտքերը։

Ուսումնասիրություններ ունի արդիական կարևոր նշանակություն։ Այնտեղ փոխկապակցված ձևով քննվում են ռազմադիտական բազում հիմնահարցեր՝ զորքի տարբեր տեսակների տեղաբաշխման ու մատակարարման, հետախուզության, ռազմական և դաշտաբարական նախապատրաստման, պաշտպանողական և հարձակողական մարտերի, հանգստի կազմակերպման և այլն։ Այդ ուղղությամբ 89-րդ հրաձգային դիվիզիայի մարտական փորձը կարող է օգտակար լինել նոր ձևավորվող ազգային զորամիավորումների համար։

Աշխատությունը գրված է լայն ընթերցողի համար։ Այն կշահեր, եթե բեռնաթափվեր ժամանակակիցների և ականատեսների էջեր կազմող վկայություններից, և հեղինակը խուսափեր իր անհատական տպավորությունները հաճախակի վկայակոչելուց։ Հաճախ է հեղինակը հրապուրվում նեղ, մարտական խնդիրների քննարկմամբ, որը քիչ է հուզում լայն ընթերցողին։ Շատ են մարդկանց, բնակավայրերի, ռազմական հանգույցների, գետերի անունները, թվական տվյալները։ Ցանկալի է, որ քննվող աշխատությունը լույս տեսնի հայերենով և գրվի հայ ընթերցողի սեղանին։

Դ. Մ. ԴԻՂԱՄՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր